

**«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի  
Շահառուների խորհրդի 4-րդ կազմի 2009 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 16:30-  
ին կայացած նիստի**

**ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3 (մաս 2)**

**Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝**

Թամարա Աբրահամյան, Անդրանիկ Վերանյանի լիազոր ներկայացուցիչ	«Նոյեմբերյանի Համայնքների Միություն» ԻԱՄ
Աշոտ Հովհաննիսյանը	«Դիլենտ սերվիս» կրթական ՀԿ
Գագիկ Բաբախանյանը	«Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ» ՀԿ
Լիլիթ Ասատրյանը	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Կարեն Մաթևոսյանը	«Ազատություն և իրավունք» ՀԿ
Նունե Պեպանյանը	«Լուսաստղ» ՀԿ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Պարզև Բարսեղյանը	«Հասարակական քարոզչություն» ՀԿ
Մարիաննա Եղիազարյան, Կարեն Զադոյանի լիազոր ներկայացուցիչ	«Հայաստանի իրավաբանական հիմնադրամ»
Սյուզաննա Սողոմոնյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիա» ՀԿ
Նորայր Դանիելյան, Վիկտոր Ենգիբարյանի լիազոր ներկայացուցիչ	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
Անահիտ Հակոբյան, Գրիգոր Բաղիրյանի լիազոր ներկայացուցիչ	«Ինտեգրացիոն գործընթացների աջակցության կենտրոն» ՀԿ
Մարատ Ատովյանը	««Պրոգրես» սոցիալական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հովհաննես Հովհաննիսյանը	««Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Թամարա Աբրահամյան, Անդրանիկ Վերանյանի լիազոր ներկայացուցիչ	«Նոյեմբերյանի Համայնքների Միություն» ԻԱՄ

***Նիստից բացակայում էին***

Կարինե Մովսիսյանը	«Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ
-------------------	-------------------------------------

***Նիստին մասնակցում էր նաև՝***

ՇԽ օգնական Վիկտորյա Գրիգորյանը

Նիստը նախագահում էր ՇԽ անդամ Գագիկ Բաբախանյանը:

Նախագահողը ներկաներին հիշեցրեց ՇԽ նոյեմբերի 16-ի նիստին քննարկված հարցերի վերաբերյալ և նշեց, որ նոյեմբերի 16-ի նիստը չէր ավարտվել՝ օրակարգային հարցերը չսպառելու պատճառով:

ՇԽ անդամներ Պ. Բարսեղյանը և Հ. Հովհաննիսյանն առաջարկեցին նախորդ նիստի արդյունքներն ամփոփել, և այն համարել փակված, որից հետո սկսել նոր նիստ՝ համաձայն ներկայացված օրակարգի:

ՇԽ անդամ Պ. Շահինյանը առաջարկեց չսկսել նոր նիստ, այլ շարունակել նոյեմբերի 16-ի նիստը: Նա նշեց նաև, որ նախկինում ՇԽ անդամները կիրառել են նման փորձառություն:

ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը նշեց, որ ՇԽ նախորդ կազմի գործունեության ընթացքում երկու փորձառություններն էլ կիրառվել են:

Հաշվի առնելով, որ քննարկման արդյունքում անդամների մեծ մասը հակված էին նոր նիստ անցկացնելու առաջարկությանը՝ նախագահողը քվեարկության դրեց հետևյալ առաջարկությունը՝ ամփոփել նոյեմբերի 16-ին սկսված ՇԽ նիստը և բացել նոր նիստ: Ներկա 14 ՇԽ անդամներից միայն 7-ը (Թամարա Աբրահամյան, Աշոտ Հովհաննիսյան, Գագիկ Բաբախանյանը, Լիլիթ Ասատրյանը, Կարինե Մովսիսյանը, Նունե Պեպանյանը, Պողոս Շահինյանը) մասնակցեցին քվեարկությանը և կողմ քվեարկեցին առաջարկությանը:

Նիստը փակվեց ժամը 17:00-ին:

*Նախագահող՝*

*Գ. Բաբախանյան*

*Քարտուղար՝*

*Վ. Գրիգորյան*

*30-ը նոյեմբերի, 2009թ.*